ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՏԵՂԾՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ, ԱՄՓՈՓՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԻ ՆԻՍՏԻ

Ք.Մեծամոր

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Մարատ Հովհաննիսյան- Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Գևորգ Խաչատրյան - զարգացման ծրագրերի,տուրիզմի,առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի պետ
Հանձնաժողովի անդամներ՝
Տոնիկ Մացակյան- համայնքի ավագանի
Քնարիկ Գալստյան- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ
Արմինե Մարգարյան- «Մեծամոր համայնքի մշակույթի տուն և գրադարան» ՀՈԱԿ-ի տնօրեն
Նաիրա Առաքելյան- «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ նախագահ
Աղվան Գրիգորյան- համայնքի ակտիվ բնակիչ
Ժորա Զաքարյան- կամավոր
Տիգրան Իզրյան- կամավոր
Հանձնաժողովի քարտուղար՝ Անահիտ Խաչատրյան- համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետ

ՕՐԱԿԱՐԳ

Մեծամոր համայնքուում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների ներկայացման, ամփոփման, առաջարկների նախնական գնահատման եվ հանրային քննարկումների եվ լսումների փուլի մեկնարկ

Լսեցին.

1. Հանձնաժողովի նախագահ Մարատ Հովհաննիսյանին, ով արձանագրեց, որ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման պլան-ժամանակացույցի համաձայն՝ առաջարկների ներկայացման փուլն ավարտվել է և անհրաժեշտ է գնահատել ստացված առաջարկները:

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ Գևորգ Խաչատրյանին, ով ներկայացրեց ստացված թվով 11 առաջարկները՝ գնահատման համար: Նա նշեց նաև 1 առաջարկի մասին (առաջարկ 7) որի մեջ բնակչի խնդրանքով կատարվել էր փոփոխություն Նորապատի մշակույթի տան

ջեռուցում մասը փոխարինել Նորապատի մշակույթի տան ջեռուցման և հովացման արդիականացում բառերով:

Առաջարկ 1. **Զբոսայգու բարեկարգում Երասխահուն քաղաքում**

Առաջարկ 2. **«Գրքի ուժը՝ մեր համայնքում»**
Գրքային ֆոնդի համալրում Մեծամոր բնակավայրում

Առաջարկ 3. **Մշակույթի տանը գտնվող մարզադահլիճի վերանորոգում Նոր Կեսարիա բնակավայրում**

Առաջարկ 4. **Ֆուտբոլի դաշտի վերանորոգում Արևիկ բնակավայրում**

Առաջարկ 5. **Կանգառների կահավորում Զարթոնք բնակավայրում**

Առաջարկ 6. **Կանաչ տարածքների ոռոգման համակարգի ստեղծում Մեծամոր քաղաքում**

Առաջարկ 7. **«Նորապատի մշակույթի տան ջեռուցման և հովացման արդիականացում»**

Առաջարկ 8. **Զբոսայգու կառուցում Ջանֆիդա բնակավայրում**

Առաջարկ 9. **Աղբամանների տեղադրում Նոր Արտագերս բնակավայրում**

Առաջարկ10. **Առողջ ապրելակերպի և ֆիզիկական դաստիարակության պայմանների բարելավում Ջրաշեն բնակավայրում**

Առաջարկ 11. **Կանգառների կահավորում Եղեգնուտ բնակավայրում**

Առաջարկեց գնահատել ստացված բոլոր առաջարկները, որի արդյունքում մերժվեցին հետևյալները՝

Առաջարկ 8-ը մերժվում է թերի ներկայացնելու պատճառով: Նշված չէ հասցե և կցված չէ հայտը

Առաջարկ10-ը մերժվում է քանի որ սպորտդահլիճի վերանորոգումը հնարավոր չէ իրականացնել ավագանու որոշմամբ սահմանված գումարի սահմանաչափին համապատասխան: Շենքը գտնվում է անմխիթար վիճակում, որի վերանորոգումը կպահանջի 5 մլն ՀՀ դրամից ավել գումար:

Ստացված առաջարկներից ընդունվեցին դրական գնահատված թվով 9 առաջարկ՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 11 (այդ թվում՝ առաջարկ 7-ում Նորապատի մշակույթի տան ջեռուցում մասը փոխարինել Նորապատի մշակույթի տան ջեռուցման և հովացման արդիականացում բառերով)

Քննարկումների արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Նախնական գնահատման փուլում դրական գնահատված առաջարկները ՝ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 9, 11 տեղափոխել հանրային քննարկումների և լսումների փուլ՝ քվեարկության փուլին ընդառաջ՝ մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն:

2. Սկսել Հանրային քննարկումների և լսումների փուլը՝ հաստատված ժամանակացույցին համապատասխան:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Մարատ Հովհաննիսյան

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ _____ Գևորգ Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Անահիտ Խաչատրյան